ՀԱՂԹԱՆԱԿԻ 25-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻՆ

ՔՆԱՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Քառորդ դար առաջ վերջին անգամ որոտացին հրանոթները, որոնք ի լուր աշխարհի աղդարարեցին Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտը՝ սովետական զինված ուժերի փայլուն հաղթանակով։

Մարդկային հասարակության անցյալ պատմությանը հայտնի չեն մասսայական հերոսության այնպիսի օրինակներ, ինչպիսիք դրսևորեցին սովետական մարդիկ Հայրենական մեծ պատերազմի տարիներին։ Նրանք հանդես բերին բարոյական բարձր հատկություններ՝ անսահման սեր սոցիալիստական հայրենիքի ու կոմունիստական կուսակցության նկատմամբ, սովետական ժողովուրդների բարոյա-քաղաքական միասնություն, անհաշտելիություն դեպի սոցիալիզմի թշնամիները, մահն արհամարհելու ուժ, համարձակություն և հերոսություն թշնամուն հաղթելու գործում։

Պատերազմն սկսելուց մեկ շաբաթ հետո, 1941 թ. հունիսի 29-ին, կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը մշակեցին թշնամուն հակահարված տալու և վերջնականապես ջախջախելու իրենց մարտական ծրագիրը։ Այդ ծրագիր-դիրեկտիվով կուսակցությունը սովետական մարդկանց առջև խնդիր դրեց՝ հասկանալ մեր երկրին սպառնացող վտանգի ողջ լրջությունը, հրաժարվել խաղաղ ժամանակվա տրամադրություններից, ամեն ինչ ի սպաս դնել հաղթանակի ապահովման գործին։

Սովետական ողջ ժողովուրդը, այդ թվում նաև Հայկական ՍՍՀ աշխատավորները, թիկունքում բոլոր աշխատանքները վերակառուցեցին ռազմական ձևով, ամեն ինչ ենթարկեցին ռազմաճակատի շահերին և թշնամու ջախջախման գործին։ Հայրենիքին սպառնացող վտանգը հետին պլան մղեց այն ամենը, ինչ անձնական էր, ամեն ինչ ենթարկեց ընդհանուրի շահերին։ Սովետական Միության աշխատավորները պատերազմի հենց առաջին օրվանից բազմակողմանի օգնություն էին ցույց տալիս Կարմիր բանակին. ժամանակին համալրում էին նրա ջարքերը, մատակարարում էին նրան այն ամեն անհրաժեշտը, ինչ հնարավոր էր։ Թիկունքում աշխատավորները կարգավորեցին նաև զորք ու ռազմական բեռներ փոխադրող միջոցների ռիթմիկ աշխատանքը, ապահովեցին բոլոր հիմնարկ-ձեռնարկների, գործարանների ու ֆաբրիկաների, հանքերի ու էլեկտրակայանների, հեռախոսային ու հեռագրական կապի անխափան աշխատանքը։

Դեռևս քաղաքացիական պատերազմի տարիներին Վ. Ի. Լենինը ասել է. «Դրությունը չափազանց ծանր է, բայց մենք չենք հուսահատվում, որովհետև դիտենք, որ ամեն անգամ, երբ դժվար դրություն է ստեղծվում Սովետական

ռեսպուբլիկայի համար, բանվորները քաջության հրաշքներ են ցուցաբերում, իրենց օրինակով քաջալերում և ոգևորում են զորքին ու նրանց առաջնորդում դեպի նոր հաղթանակներ»[1]։

Մեր երկրի բանվոր դասակարգը, նրա հետ միասին նաև աշխատավոր գյուղացիությունը և մտավորականությունն աշխատանքային այդպիսի հրաշքներ գործեցին նաև Հայրենական պատերազմի տարիներին։ «Ամեն ինչ ռազմաճակատի, ամեն ինչ հաղթանակի համար» լոզունգը դարձավ սովետական ամեն մի քաղաքացու նշանաբանը։

Փոխարինելով ռազմաճակատ մեկնածներին, բանվորներն ու բանվորուհիները հերոսաբար աշխատեցին հանքերում ու գործարաններում, ֆաբրիկաներում ու ձեռնարկություններում՝ զենք, զինամթերք ու հանդերձանք արտադրելով ռազմաճակատի համար։

Կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները մեծ զրկանքների գնով բանակին տվեցին ավելի շատ հաց ու գյուղատնտեսական զանազան մթերքներ։ Նրանք հնարավորության սահմաններում ընդարձակեցին ցանքատարածություններն ու ավելացրին անասունների մթերատվությունը։

Մտավորականներն իրենց ուժերի առավելագույն լարումով թիկունքում կոփում էին հաղթանակի զենքը, հայտնարերում հումքի նոր պաշարներ, գիտության ու տեխնիկայի նվաճումներն ի սպաս էին դնում արդյունաբերությանն ու գյուղատնտեսությանը, արտադրում այն ամենն ինչ անհրաժեշտ էր ժողովրդական տնտեսության և հայրենիքի պաշտպանության համար։

Պետական բազմազան պարտավորություններ կատարելուց բացի, հայրենիքին անհունորեն նվիրված սովետական մարդիկ երկրի պաշտպանության համար նոր միջոցներ հավաքագրելու նպատակով, առաջարկում են ստեղծել ժողովրդական հատուկ ֆոնդ, որը ստացավ համաժողովրդական օգնություն անունը։

Պաշտպանության ֆոնդի կազմակերպման առաջարկով հազարավոր նամակներ էին ստացվում քաղաքներից ու գյուղերից, ռազմաճակատից ու թիկունքից։ Այդ նամակներն այժմ էլ չի կարելի առանց հուզմունքի կարդալ։ Կանայք, ամուսիններին ուղարկելով ռազմաճակատ, պաշտպանության ֆոնդին էին հատկացնում մեկ օրվա աշխատավարձը, իրենց ոսկեղեն ու արծաթեղեն զարդերը, երեխաները՝ կոպեկ առ կոպեկ կուտակած դրամը, ծերունիներն՝ իրենց կենսաթոշակի մի մասը և այլն։ 1941 թ. հուլիսի վերջին մեր անծայրածիր երկրի աշխատավորները ստեղծեցին «Երկրի պաշտպանության ֆոնդը»։

Սովետական Հայաստանի աշխատավորներն առաջինների թվում են մասնակցել այդ հայրենանվեր գործին։ Արվեստի աշխատողների ժողովում ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը հայտնեց, որ պաշտպանության ֆոնդին է մուծում 6000 ռուբլի կանխիկ դրամ և 10000 ռուբլու փոխառության պարտատոմս[2]։ Թալինի շրջանի կոլտնտեսություններն ու կոլտնտեսականները նվիրեցին 35 հազար ռուբլի կանխիկ դրամ, 1200 գլուխ ոչխար, 400 կգ յուղ, 410 կգ պանիր, 500 փութ հացահատիկ, 20 հազար ռուբլու փոխառության պարտատոմս և մի զույգ ականջի ոսկյա օղ[3]։ Իսկ Հոկտեմբերյանի շրջանի Բամբա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 64։

2 «Սովետական Հայաստան», 2. VIII. 1941։

3 Նույն տեղում, 5. VIII. 1941։

կաշատ գյուղի կոլտնտեսականները այդ ֆոնդին հատկացրին 30 հազար ռուբլի կանխիկ դրամ և 338 աշխարի հասանելիքը[4]։

Տամրովի մարդի կոլտնտեսականների կոչով, 1942 թ. նոյեմբերի 12-ին, սկսվեց տանկային շարասյուն ստեղծելու համար միջոցների հավաքումը[5]։

Մեր հանրապետությունում ևս հայրենասիրական շարժում ծավալվեց «Սովետական Հայաստան» մարտական ինքնաթիռների միավորում և «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյան կառուցման ֆոնդ ստեղծելու համար։ Այդ նպատակին Լենինականի տեքստիլ կոմբինատի կոլեկտիվն իր խնայողություններից տրամադրեց ավելի քան 6 միլիոն ռուբլի[6], Կիրովականի աշխատավորները «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյան համար մուծեցին 349.000 ռուբլի, իսկ «Սովետական Հայաստան» մարտական ինքնաթիռների միավորման կառուցման համար՝ 397.000 ռուբլի[7]։

Պաշտպանական ֆոնդերի կազմակերպման գործում իր պատվավոր տեղն ունի Երևան քաղաքի աշխատավորությունը։ Այդ գործի առաջամարտիկները Կիրովի անվան կոմբինատի, Ձերժինսկու անվան գործարանի, Քանաքեռդէսի, Ձեթ-օճառ կոմբինատի, «Արարատ» գործարանի բանվոր-ծառայողներն էին։ Մայրաքաղաքի բոլոր աշխատավորները իրենց մեկ ամսվա աշխատավարձը հատկացրին այդ նվիրական գործին։ Այդ հատկացումները կազմեցին մոտ 17 միլիոն ռուբլի։ Երևան քաղաքի Կիրովյան (այժմ Սպանդարյան) շրջանի աշխատավորները միայն 1942 թ. պաշտպանության ֆոնդը մուծեցին 332 հազար ռուբլի, բաժնեգրվեցին 1.400.000 ռուբլու դրամա-իրային վիճակախաղի տոմսերի և 74 միլիոն ռուբլու ռազմական փոխառություն[8]։ Հայ գիտնականները այդ նպատակին հատկացրին 100 հազար ռուբլի, իսկ պետհամալսարանի կոլեկտիվը՝ 75 հազար ռուբլի, որից 18.368 ռուբլին կոմերիտականները հատկացրին տանկային շարասյան կառուցմանը[9]։

Հանրապետության պիոներ-դպրոցականներն ուսուցչության հետ մեկտեղ երկրի պաշտպանության ֆոնդը մուծեցին 2.335 հազար ռուբլի կանխիկ դրամ, 198.000 ռուբլու փոխառություն։ Ռազմական արդյունաբերության համար հավաքեցին 5.138 տոննա մետաղի շարդոն, ռազմաճակատի մարտիկներին ուղարկեցին 41.400 նվեր-ծանրոց[10]։ 1942 թ. վերջին օրինակելի նախաձեռնություն հանդես բերեցին Երևանի Պուշկինի անվան դպրոցի աշակերտները, որոնք կոչ արեցին Հայաստանի բոլոր դպրոցականներին ստեղծել «Հայաստանի պիոներիա» կործանիչ ինքնաթիռների միավորման կառուցման ֆոնդ։ Եվ մի քանի օրվա ընթացքում նրանք հավաքեցին 9.376 ռուբլի[11]։

Հետևելով Պուշկինի անվան դպրոցի աշակերտների օրինակին, Երևանի պիոներ-դպրոցականները կարճ ժամկետում հավաքեցին 26.670 ռուբլի։ Երևանի օրինակին հետևեցին Կիրովականի, Կարմիրի, Իշևանի պիոներ-դպրո-

---

4 Նույն տեղում, 3. VIII. 1941։

5 «Великая Отечественная война Советского Союза 1941—1945, краткая история», М., 1967, стр. 287.

6 Հայրենական պատերազմի պատմության կաբինետի (ՀՊՊԿ) արխիվ, ֆ. 275, գ. 8, թ. 2։

7 «Սոցարշավ», 17. VI. 1943։

8 Ա. Լ. Հարությունյան, Երևանը Հայրենական պատերազմի տարիներին (1941—1945), Երևան, 1958, էջ 65։

9 Մշի հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 48, ց. 18, գ. 407, թ. 16։

10 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 239, գ. 14, թ. 2։

11 Նույն տեղում, գ. 4, թ. 29։

ցտկանները։ Այսպիսով հանրապետության պիոներ-դպրոցականները «Հայաստանի պիոներիա» կործանիչ ինքնաթիռի կառուցման ֆոնդը մուծեցին 120 հազար ռուբլի[12]։

Արձագանքելով Մոսկվայի Վախթանգովի անվան թատրոնի դերասանների հայրենասիրական կոչին՝ «Սովետական արտիստ» մարտական ինքնաթիռների միավորում կառուցելու մասին, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի արտիստները հատկացրին երկու օրվա աշխատավարձ և հանգստյան օրերին տրված երկու ներկայացման գումարները։ Նույնպիսի նախաձեռնությամբ հանդես եկան նաև Սունդուկյանի, Ստանիսլավսկու, Ջաբարլիի անվան թատրոնների կոլեկտիվները, իսկ շքանշանակիր Հայֆիլհարմոնիայի կոլեկտիվը մի շարք համերգներից ստացված եկամուտը ամբողջովին հատկացրեց այդ նպատակին։

Ետ չէին մնում նաև գյուղի աշխատավորները։ Հոկտեմբերյանի շրջանի աշխատավորներն իրենց հավաքած մեկ միլիոն 150 հազար ռուբլին ուղարկեցին Պաշտպանության պետական կոմիտեի հասցեով՝ խնդրելով «Հաղթանակ» ինքնաթիռների միավորում կառուցել և այն հանձնել բանակի գեներալ Բաղրամյանի զորքերին։ Արտաշատի շրջանի աշխատավորների միջոցներով և խնդրանքով Մոսկվայի Հոկտեմբերյանի երկաթուղու բաժանմունքի արհեստանոցը կառուցեց «Սովետական Հայաստան» զրահագնացք[13]։ Դուզքենդի (այժմ Ախուրյան), Ստեփանավանի և Իջևանի շրջանների կոլտնտեսականները տանկային շարասյան համար հատկացրին 7.250.000 ռուբլի[14]։

Հանրապետության կոլտնտեսականները միայն «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյան կառուցման ֆոնդը մուծեցին 49.300 հազար ռուբլի, իսկ պաշտպանության ֆոնդին հատկացրին 130 հազար փութ զանազան մթերքներ[15]։

Կոմերիտականներն ու երիտասարդները միջոցներ հավաքեցին «Հայաստանի կոմերիտական» տանկային շարասյան համար։ Այդ նպատակով հաճախ կազմակերպվում էին կիրակնօրյակներ, արտաժամյա աշխատանքներ, որոնցից ստացված միջոցները հատկացվում էին այդ ֆոնդին։ Հանրապետության կոմերիտականներն ու երիտասարդներն այդ ֆոնդին հատկացրին 3 միլիոն 200 հազար ռուբլի[16]։ Տանկային շարասյան համար միջոցների հավաքումից բացի Հայաստանի երիտասարդությունը 1 միլիոն 15 հազար ռուբլի հատկացրեց «Երիտասարդ գվարդիա» կործանիչ ինքնաթիռների միավորման կառուցմանը։

Ռազմական առաջին փոխառության բաց թողումից առաջ Ղափանի պղնձահանքային կոմբինատի կոլեկտիվը դիմեց ՍՍՀՄ ֆինժողկոմին «Հայրենիքի պաշտպանություն» անունով ռազմական նոր փոխառություն բաց թողնելու մասին և ցանկություն հայտնեց այդ փոխառությանը բաժնեգրվել առաջինը[17]։ Եվ, իրոք, 1942 թ. ռազմական փոխառությանը՝ Հայաստանում առաջինը բաժնեգրվեցին ղափանցիները։ Տարեցտարի ավելանում էր պետական

12 Նույն տեղում, ֆ. 239, գ. 4, թ. 2։
13 ՄԼԻ հայկական ֆիլիալի կոտարխիվ, ֆ. 1, ց. 31, գ. 40, թ. 145։
14 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 279, գ. 3, թ. 1, 2, 4։
15 ՄԼԻ կոտ. արխիվ, ֆ. 1, ց. 31, գ. 2, թ. 9։
16 «Սովետական Հայաստան», 7. II. 1943։
17 ՄԼԻ հայկական ֆիլիալի կոտ. արխիվ, ֆ. 1, ց. 31, գ. 59, թ. 47։

ռազմական փոխառության բաժնեգրման գումարը. ռազմական չորս փոխառություններին Հայաստանի աշխատավորները միասին վերցրած բաժնեգրվեցին 665 միլիոն 144 հազար ռուբլի[18]։

Հայաստանի աշխատավորները պաշտպանության ֆոնդն էին մուծում նաև ոսկեղեն, արծաթեղեն, սննդամթերք։ Այդպես, կոլտնտեսականները Կովկասի պաշտպանության օրերին հանձնեցին 5.590 ցենտներ միս, 4.260 կգ բուրդ և 41.690 փութ հացահատիկ[19]։

Այս ամենը ցույց է տալիս, որ, իրոք, սովետական թիկունքն ու ռազմաճակատը կազմում էին մեկ միասնական նակատ։ Ռազմաճակատի ու թիկունքի անխզելի կապի մասին են մասնավորապես վկայում շոկի հրամանատար Վահան Մովսիսյանի՝ հարազատներին ուղարկած նամակի տողերը. «Սովետական ամրակուռ թիկունքը դիտառատ մոր պես օգնում է մեզ։ Մեր թիկունքն ու ռազմաճակատը միասնական են։ Դուք անդուլ կերպով աշխատեցեք արևավառ Հայաստանի կոլխոզներում և գործարաններում, որպեսզի ձեր հերոսական աշխատանքով է՛լ ավելի ամրապնդեք մեր սովետական թիկունքը, մեր փառապանծ կարմիր բանակի ուժն ու հզորությունը»[20]։

Հայաստանի աշխատավորները 1942 թ. նոր տարվա նախօրյակին առաջին անգամ ռազմաճակատ ուղարկեցին 2900 նվեր-ծանրոց[21]։ Ստանալով այդպիսի նվեր-ծանրոցներ, հեծելազորային միավորումներից մեկի հրամանատար, Սովետական Միության հերոս Բուտիլովը շնորհակալության հեռագիր ուղարկեց Հայաստանի Կենտկոմին. «Ես ծանրոցներ եմ ստացել Սևանի շրջանի աշխատավորներից և Իջևանի շրջանի Սոլգեղ և Ուզունթալա գյուղերի կոլխոզնիկներից, կոմերիտականներից ու դպրոցականներից։ ...Ընկեր Բուդյոնին խնդրել է իր անունից շնորհակալություն հայտնել այդ կազմակերպություններին և այդ մասին հրապարակել տեղական մամուլում»[22]։

Նվեր-ծանրոցների առաքումը ռազմաճակատ ուժեղացավ հատկապես Կարմիր բանակի 24-րդ տարեդարձի նախօրյակին։ Այդ ժամանակ ռազմաճակատ ուղարկվեցին 31 հազար 83 ծանրոց, մոտ 100 տոննա քաշով[23]։ Դեռևս փետրվարի 19-ին Սովինֆորմբյուրոն հաղորդեց. «Հայաստանի աշխատավորները օրերս հերթական գնացքով նվերներ ուղարկեցին Կարմիր բանակին։ Նվերների թվում կա 5 տոննա պանիր, 1 տոննա կարագ, 5 տոննա չորացրած միրգ, 10 տակառ գինի և կոնյակ, շատ ծխախոտ և ավելի քան 8 հազար անհատական ծանրոց։ Գնացքն ուղեկցում է Հայաստանի կոլտնտեսականների պատվիրակությունը՝ հին պարտիզան Գալումյանի գլխավորությամբ։ Մի քանի օրում Հայաստանի աշխատավորները սովետական բանակի համար ուղարկել են 24.850 ծանրոց»[24]։ Մայրական հոգատար ձեռքերով պատրաստած այդ նվեր-ծանրոցները ուղարկվում էին ռազմաճակատի տարբեր հատվածները և բոլոր ազգություններին պատկանող մարտիկները հուզմունքով էին ընդունում այդ ծանրոցներն ու նրանցում դրված հայրենասիրական նամակները։ Ի պա-

---

18 «Սովետական Հայաստան», 25. IV. 1942, 11. VI. 1943, 12. V. 1944, 6. V. 1945։

19 Տե՛ս «Сообщения Совинформбюро», т. 11, стр. 23.

20 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 292, գ. 2, թ. 11։

21 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 31, գ. 45, թ. 28։

22 «Սովետական Հայաստան», 10. II. 1942։

23 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 30, գ. 277, թ. 70։

24 «Сообщения Совинформбюро», т. II, 1944, стр. 113.

տասխան այդ հոգատարության ռազմաճակատից մի խումբ հայ կարմիրբանակայիններ 1944 թ. հոկտեմբերի 8-ին գրում են. «Սիրելի հարազատներ, իմարկե ձեր օգնությունը Կարմիր բանակին հաղթանակն ապահովելու համար շատ մեծ է։ Ձեր կառուցած «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունն է, որ ոչընչացնում է թշնամուն, ձեր կառուցած «Հայաստանի կոլխոզնիկ» տանկային շարասյունն է, որ բնաջնջում է հիտլերյան ոհմակներին, կոմերիտականների հավաքած «կոմերիտական չերվոնեցներն» ու հայ ժողովրդի հավաքած պետական ֆոնդերն ու տաք հագուստներն են, որ ապահովում են Կարմիր բանակի հաղթանակը և թշնամու լրիվ ջախջախումը։ Ձեր ուղարկած նվեր-ծանրոցներն են, որ ավելի մեծ ատելություն են առաջացնում մեր մեջ դեպի թշնամին։

Դուք համոզված եղեք, որ մենք մինչև մեր կյանքի վերջը, մինչև մեր արյան վերջին կաթիլը, մինչև մեր բազկի վերջին ուժը պետք է կռվենք և ջախջախենք թշնամուն»[25]։

Տաք հագուստի հավաքման կամպանիայի սկզբից մինչև 1942 թվականի մայիսն, ըստ հանձնաժողովի տվյալների, Հայաստանի աշխատավորները, դրամի վերածված, հավաքել էին 7 միլիոն 690 հազար ռուբլու տաք հագուստ[26]։

Կարմիր բանակին ցույց տրվող այդ օգնության կազմակերպումը գտնվում էր հանրապետության կուսակցական և պետական օրգանների ամենօրյա ուշադրության կենտրոնում։ Հայաստանի ԿԿ Կենտկոմը դեռևս 1942 թ. օգոստոսին հատուկ կոչով դիմեց ողջ ժողովրդին տաք հագուստի հավաքման կամպանիան ավելի լավ կազմակերպելու և անցկացնելու մասին, իսկ հոկտեմբերին, անդրադառնալով հանձնաժողովի կատարած աշխատանքներին, նշեց, որ Հայաստանի աշխատավորներն ավելի լայնորեն ծավալելով այդ աշխատանքները, հոկտեմբերի վերջին, միայն Սևծովյան նավատորմայիններին, ուղարկեցին 15.700 ծանրոց, իսկ նոյեմբերին՝ Անդրկովկասյան ռազմաճակատում գործող հայկական միավորումներին՝ 21882 ծանրոց՝ 33 տոննա ընդհանուր քաշով[27]։ Կարմիր բանակի 25-րդ տարեդարձի նախօրյակին միայն՝ Երևանի Կիրովյան շրջանի բանվոր-ծառայողներն ուղարկեցին 500 նվեր-ծանրոց, Եղեգնաձորի շրջանը՝ 450, Բասարգեչարը (Վարդենիս)՝ 2504 ծանրոց[28]։

Լենինականի քաղկոմը, գլխավորելով բանվորական կոլեկտիվների հայրենասիրական խանդավառությունը, Կարմիր բանակի ռազմիկներին ուղարկեց 25.143 ռուբլու նվեր-ծանրոց[29]։ Պատերազմի սկզբից մինչև 1943 թ. սեպտեմբեր ամիսը Արտաշատի շրջանի աշխատավորները երկրին և ռազմաճակատին տվեցին 5400 վագոն գյուղատնտեսական մթերքներ, որոնցից 8 վագոնը ուղարկվեց Ուկրաինայի պարտիզանական միավորումներից մեկին։ Պատվիրակության ղեկավարը Հայաստանից մեկնելիս ուկրաինական պարտիզանների անունից հայտարարեց. «Մենք զգացված ենք Հայաստանի կոլխոզնիկների եղբայրական ընդունելությամբ։ Վերադառնալով մեզ մոտ մեր ընկերներին կպատմենք զամարլվեցիների անձնվեր աշխատանքի մասին, նրանց բարձր հայրենասիրության և Հայրենիքին նվիրված լինելու մասին»[30]։

---

25 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 292, գ. 2, թ. 39։

26 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 31, գ. 45, թ. 271։

27 Նույն տեղում, գ. 277, թ. 76—77։

28 «Սովետական Հայաստան», 7. II. 1943։

29 «Բանվոր», 3. II. 1943։

30 «Սովետական Հայաստան», 28. IX. 1943։

Սովետական Հայաստանի երիտասարդները նվեր-ծանրոցներ ուղարկեցին Օրյոնիկիձևի երկրամասի և Ղրիմի սարդի պարտիզաններին։ Միայն Կովկասի ռազմաճակատի զորքերին և Սևծովյան նավատորմայիններին Հայաստանի աշխատավորներն ուղարկեցին ավելի քան 1.136.000 կտոր տաք հագուստ, 206.323 անհատական նվեր-ծանրոց և 45 վագոն սննդամթերք[31]։ Դեղաբույսերի հավաքման գործում հատկապես աչքի ընկան Ղափանի շրջանի Արծվանիկ գյուղի երիտասարդները։ Ամբողջ հանրապետությունում հավաքվեց 4000 տոննա մետաղի ջարդոն և 163.350 ռուբլու արժողությամբ մեքենաների մասեր։

Հայրենական պատերազմի տարիներին բանակին և բնակչությանը բժշկական օգնություն ցույց տալու գործում մեծ էր Հայաստանի առողջապահության աշխատողների դերը։ Դեռևս պատերազմից առաջ հանրապետությունում գործող հոսպիտալներին, ժողկոմխորհի որոշմամբ ավելացավ ևս 15-ը[32]։ Իսկ 1942 թվականի ամռանը Սոչիից էվակուացվեցին ևս 10 հոսպիտալ և մահճակալների թիվը Հայաստանում ավելացավ 2500-ով[33]։

Հանրապետության առողջապահության աշխատողները մեծ դեր կատարեցին վիրավոր և հիվանդ ռազմիկների բուժման գործում։ Դրա հետ միաժամանակ հարկ է հիշատակել նաև այն բացառիկ ուշադրությունը, որ ցուցաբերեցին Սովետական Հայաստանի հասարակական կազմակերպություններն ու ամբողջ ժողովուրդը վիրավոր ռազմիկների նկատմամբ։ Ժողովուրդն իր դավակներին օգնում էր թե բարոյապես և թե նյութապես։ Այդ նպատակով բոլոր կազմակերպությունները, հիմնարկ-ձեռնարկությունները շեֆական օգնության պարտավորություններ ստանձնեցին։ Հաճախակի կարելի էր տեսնել վիրավորի մահճակալի մոտ գամված որևէ տնտեսուհու, բանվորուհու, ծառայողի կամ նույնիսկ դպրոցականի։ Նրանք հոգում էին վիրավորի բոլոր կարիքները։ Ցուրտքանչյուր վիրավոր իրեն զգում էր իր հարազատների գրկում։ Դա բարձրացնում էր զինվորի բարոյական ոգին։ Այսպես, Ալավերդու աշխատավորները միայն 1942 թ. մայիսին № 3698 հոսպիտալում հերթապահեցին 49 անգամ, իսկ Նոր Բայազետի աշխատողները № 3699 հոսպիտալն ապահովեցին անհրաժեշտ գույքով, գրադարանին նվիրեցին 250 կտոր գրականություն[34]։ № 3693 հոսպիտալի համար Կոտայքի շեֆ կոլտնտեսականները մշակեցին 3 հեկտար բանջարանոց, իսկ Ստեփանավանի կոլտնտեսականները՝ 2 հեկտար կարտոֆիլ[35]։

Պատերազմի ընթացքում միայն Կարմիր բանակի գործող զորամասերում և ռազմա-ծովային նավատորմում գեղարվեստական սպասարկում են կազմակերպել և շեֆական օգնություն ցույց տվել արվեստի 156 գործիչներ։ Այդ գործի մեծ էնտուզիաստն Արուս Ոսկանյանն էր։ Նրա տաղանդը հարյուրավոր բանակայինների և կոլտնտեսականների նամակ-գովասանքի նյութ է դարձել։ Շեֆական աշխատանքներում իրենց ջանասիրությամբ աչքի ընկան Հայաստանի երգի-պարի վաստակավոր անսամբլը (ղեկ. ժող. արտիստ Թաթուլ Ալթունյան),

31 Մշի հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, կապոց 9, գ. 53։
32 ՀՀՍՇՊԿ արխիվ, ֆ. 118, ց. 3, գ. 46, թ. 1—13։
33 Նույն տեղում, ֆ. 40/113, ց. 6, գ. 69, թ. 114։
34 ՀՊՊԿ արխիվ, ֆ. 242, գ. 9, թ. 7—8։
35 Նույն տեղում, թ. 23։

ՊԱ-12.484

պետական ջազ-նվագախումբը (ղեկ. ժող. արտիստ Արտեմի Այվազյան), Հայ-ֆիլհարմոնիայի կոլեկտիվը և այլն[36]։

Անքակտելի էր թիկունքի և ռազմաճակատի կապը։ 1942 թ. մայիսին Ղրիմի ռազմաճակատ մեկնեց պետական ջազ-նվագախումբը, որը պատերազմական իրադրության պայմաններում տվեց ավելի քան 20 համերգ։ Այդ կապակցությամբ Հայկական 390-րդ դիվիզիայի հրամանատարությունը ՀԿ(բ)Կ Կենտկոմին գրել է. «Ձեր կողմից ուղարկած Հայաստանի պետական ջազ-նվագախումբը մայիսմեկյան այս տոնական օրերին իր գեղարվեստական սպասարկմամբ վիթխարի գործ կատարեց առաջավոր գծում կռվող հայկական դիվիզիայի հրամանատարներին, մարտիկներին և քաղաշխատողներին, նա ոգեշնչեց քաջառողջություն, հաստատակամություն առաջիկա վճռական մարտերի համար։ Այն կրկին անգամ հաստատեց ռազմաճակատի և թիկունքի միասնությունը»[37]։

1944 թ. Ղրիմի ե Մերձբալթյան ռազմաճակատներն այցելեց Հայկական ժողովրդական երգի-պարի անսամբլը, որը տարբեր զորամասերում տվեց բազմաթիվ համերգներ։ Նա ջերմ հանդիպում ունեցավ բանակի գեներալ Հովհաննես Բաղրամյանի և նրա ռազմաճակատի զորքերի հետ։ Այդ ելույթների մասին ահա թե ինչ է ասված Մերձբալթյան առաջին ռազմաճակատի հրամանատարության անունից ՀԿ(բ)Կ Կենտկոմին ուղղված ուղերձում. «Արևային Հայաստանի բազմակողմանի արվեստը առաջ բերեց զորամասերի անձնակազմի ու նոր ազատագրված Շաուլյայ քաղաքի բնակիչների ընդհանուր հիացմունքը։ Գվարդիական զորամասի ամբողջ անձնակազմի կողմից սրտանց շնորհակալություն ենք հայտնում ՀԿ(բ)Կ Կենտկոմին և հայ ժողովրդին ձեր ուղարկած անսամբլի սքանչելի համերգների համար»[38]։

Փոխադարձ այցելությամբ մայր Հայաստան եկան հայկական 89-րդ, 409-րդ, 51-րդ դիվիզիաների պատվիրակությունները։ Իրենց հանդիպումների ընթացքում ռազմաճակատի պատվիրակները. խոստանում էին շարատավորել հայ ժողովրդի պատիվը և տուն վերադառնալ միայն հաղթությամբ։

Կարմիր բանակի ռազմիկների բարոյական ոգին բարձրացնելու գործում մեծ դեր խաղաց նաև այն, որ թիկունքի աշխատավորները ամենօրյա ուշադրությամբ ու հոգատարությամբ էին շրջապատում զոհվածների, ճակատայինների ընտանիքներին, երեխաներին, հաշմանդամներին և էվակուացված քաղաքացիներին։ Կուսակցությունը և կառավարությունը համապատասխան որոշումներ ընդունեցին հատկապես էվակուացիայի ենթարկված բնակչության տեղափոխման, տեղավորման, մատակարարման, աշխատանքով ապահովելու և այլ հարցերի մասին։ Թիկունքի աշխատավորները հերոսաբար էին տանում պատերազմի հետևանքով առաջացած ամեն մի դժվարություն։ Մինչև 1944 թ. ապրիլի 1-ը Հայաստանում կար 170.534 զինծառայողի ընտանիք՝ 595.062 անդամներով, որից 346.964 երեխա, 20.640 հաշմանդամ, 6.574 էվակուացված ընտանիք՝ 15.371 բնակչությամբ, որից 10.148 երեխա[39]։

---

36 Նույն տեղում, ֆ. 238, գ. 15, թ. 1—9։

37 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 31, գ. 302, թ. 136։

38 Ս. Պ. Ա ղ ա յ ա ն, Ե. Մ. Խ ա լ ե յ ա ն, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, պրակ. 3, Երևան, 1960, էջ 233։

39 ՄԼԻ հայկական ֆիլիալի կուսարխիվ, ֆ. 1, ց. 33, գ. 366, թ. 3։

1943 թ. հունվարի 21-ին Անդրկովկասյան ռազմաճակատի ռազմական խորհուրդը ստուգեց Անդրկովկասյան հանրապետությունների զինվորական կոմիսարիատների գործունեությունը՝ զինվորական ընտանիքներին օգնություն ցույց տալու ասպարեզում։ Հանձնաժողովն արձանագրեց, որ այդ գործը հանրապետության բոլոր քաղաքներում, մասնավորապես Լենինականում ու մի շարք շրջաններում, իրոք, դրված է լավ հիմքերի վրա[40]։

Հայրենական պատերազմի ամբողջ ընթացքում կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունն անում էին ամեն ինչ, որպեսզի էլ ավելի մեծ հոգատարությամբ շրջապատվեն ճակատայինների, էվակուացիայի ենթարկվածների և զոհվածների երեխաները։ 1942 թ. փետրվարին «Պրավդան» «Հոգատարություն երեխաների մասին» խորագիրը կրող առաջնորդողում գրում է. «Ավերված քաղաքներն ու գյուղերը կարելի է նորից կառուցել։ Կարելի է վերականգնել շարքից հանված ֆաբրիկաներն ու գործարանները։ Բայց դժվար է նորմալ կյանքի վերադարձնել անապատանությունից խեղանդամ դարձած, հրջանիկ մանկությունից զրկված երեխային։ Դժվար է բուժել հոգեկան վերքերը այն դեռահասի, որի աչքերի առջև ֆաշիստական գազանները կախել են նրա հորը կամ տանջել մորը»[41]։

Թիկունքային բոլոր հանրապետություններում, այդ թվում Հայաստանում, ստեղծվեցին կյանքի նորմալ պայմաններ և որբացած երեխաները իրենց զգում էին այնպես, ինչպես հայրական օջախում։ Պատերազմի տարիներին միայն Հայաստանում գործում էին 50 մանկատուն, գիշերօթիկ դպրոց և մանկապարտեզ, որտեղ տեղավորված էին 15.648 երեխա[42]։

Հայ ժողովրդի կարեկից և հոգատար վերաբերմունքի մասին է վկայում Լենինգրադի էվակուացիայի ենթարկված մանկական սաների ծնողների նամակը, որտեղ ասված է. «Ջերմագին ողջույն Լենինգրադի ռազմաճակատից և Լենինի հերոս քաղաքի պաշտպանող մարտիկներից... Մենք՝ Լենինգրադի ռազմաճակատի մարտիկներս, մեր ջերմ շնորհակալությունն ենք հայտնում հայ ժողովրդին այն մեծ ուշադրության համար, որ նա ցույց է տալիս մեր երեխաների նկատմամբ»[43]։ Այս նամակը եզակի չէ։ Պահպանվել են այդպիսի հարյուրավոր ու հազարավոր նամակներ։

Զգալի աշխատանք էր տարվում պատերազմի հաշմանդամներին աշխատանքով ապահովելու ուղղությամբ։ ՀԿԿ Կենտկոմի 1942 թ. մայիսի 6-ի որոշմամբ հանրապետության մի շարք քաղաքներում զանազան մասնագիտությունների գծով կազմակերպվում են բազմաթիվ դասընթացներ։ 1943 թ. հունիսի 30-ի տվյալներով հաշմանդամներից 12.625-ը նպաստ էին ստանում, իսկ 9420-ն ապահովվել էր աշխատանքով[44]։ ՀԼԿԵՄ Կենտկոմի բյուրոն, ելնելով «Ճակատայինների երեխաներին օգնություն ցույց տալու գործում կոմերիտական կազմակերպությունների աշխատանքի մասին» ՀամԼԿԵՄ Կենտկոմի որոշումից, 1942 թ. սեպտեմբերին անց է կացնում Կարմիր բանակի մարտիկների և հաշմանդամների երեխաներին օգ-

40 ՀՀՍՇՊԿ արխիվ, ֆ. 40/113, ց. 8, գ. 64, թ. 80։

41 «Պրավդա», 4. II. 1942։

42 ՀՀՍՇՊԿ արխիվ, ֆ. 40/113, ց. 9, գ. 30, թ. 27։

43 Ա. Ն. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում, Երևան, 1954, էջ 504։

44 ՀՀՍՇՊԿ արխիվ, ֆ. 119, ց. 2, գ. 9, թ. 120։

նություն ցույց տալու 15-օրյակ։ Պիոներական կազմակերպությունները ստեղծեցին ֆեդիակինցիների և թեմուրականների հազարավոր խմբակներ։ Այդ խմբակները մշակում էին ճակատայինների տնամերձ հողամասերը, հավաքում և փոխադրում նրանց բերքը, ճակատայինների երեխաների համար ստեղծում էին դրամական և մթերային ֆոնդեր, խնամում երեխաներին։

Պետությունը և ժողովուրդը մեծ հոգատարությամբ էին շրջապատել նաև բազմազավակ մայրերին։ Պատերազմի ժամանակ՝ 1942 թ. օգոստոսին ԺողԿոմսովետը որոշում կայացրեց մինչև 8 տարեկան հասակ ունեցող երեխաների աշխատող մայրերին ամեն շաբաթը մեկ հանգստյան օր տալ՝ երեխաներով զբաղվելու համար[45]։ Միայն 1941—1942 թթ. Հայաստանում բազմազավակ մայրերին տրվել է 78.042.000 ռուբլու նպաստ։

Հայաստանի աշխատավորները ավելի քան 8 միլիոն ռուբլի տրամադրեցին գերմանական զավթիչների կողմից ավերված քաղաքների՝ Ստալինգրադի, Լենինգրադի, Օդեսայի, Սևաստոպոլի, ուկրաինական և բելոռուսական մի շարք քաղաքների վերականգնման համար։ Այդ գործում ուշքի ընկան Ստեփանավանի շրջանի աշխատավորները, որոնք Ստալինգրադի վերականգնման համար պետբանկ մուծեցին 1 միլիոն 266 հազար ռուբլի։ Կիրովականի շրջանի պիոներ-դպրոցականները Օդեսայի դպրոցների վերականգնման համար մուծեցին 100 հազար ռուբլի։ Սևաստոպոլի դպրոցները վերականգնելու նպատակին Արտաշատի շրջանի ուսուցիչները տրամադրեցին 115 հազար ռուբլի դրամ և 65 հազար ռուբլու փոխառություն։ Հայաստանից դեպի ազատագրված վայրերն էին ուղարկվում նաև անասուններ, սերմացու, գյուղատնտեսական գործիքներ, զանազան սարքավորումներ, մեքենաներ և այլն։

Ստանալով Ստեփանավանի շրջանի աշխատավորների ուղարկած գումարները Ստալինգրադի մարզկոմի քարտուղար Պիկսինը իր հեռագրում հաղորդեց. «Ստալինգրադցիները շնորհակալություն, մեծ շնորհակալություն են հայտնում Հայկական ՍՍՀ Ստեփանավանի շրջանի աշխատավորներին, նրանց եղբայրական օգնության համար»[46]։

Սովետական Հայաստանի աշխատավորները միայն երկրի պաշտպանության, Կարմիր բանակի համար զենք և սպառազինություն արտադրելու, գերմանա-ֆաշիստական զավթիչների կողմից ավերած քաղաքները վերականգնելու համար նվիրաբերեցին 215 միլիոն 666 հազար ռուբլի[47]։ Հայ ժողովուրդը մշտապես պատրաստ էր իր ամբողջ ուժերը, էներգիան, տաղանդը, սրտի ողջ կրակը նվիրելու երկրի պաշտպանության սրբազան գործին, ինչպես և նա վարվեց մեծ հայրենականի տարիներին։ «Հայրենական պատերազմի տարիներին,— ասված է Սովետական Հայաստանի 25-ամյակի առթիվ ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի և ՍՍՀՄ ԺողԿոմսովետի հղած հեռագրում,— հայ ժողովուրդը պատվով կատարեց իր պարտքը հայրենիքի հանդեպ։ Հայ ռազմիկները, Սովետական Միության մյուս ժողովուրդների զավակների հետ միասին անձնվիրաբար պաշտպանում էին մեր հայրենիքի ազատությունն ու անկա-

---

45 Նույն տեղում, ֆ. 40/113, ց. 9, գ. 196, թ. 53։

46 «Սովետական Հայաստան», 22. X. 1943։

47 Ս. Պ. Ա ղ ա յ ա ն, Ե. Մ. Խ ա լ ա ֆ յ ա ն, Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, պրակ 3, Երևան, 1960, էջ 244։

խությունը։ Հայաստանի բանվորները, կոլտնտեսականները և ինտելիգենցիան անդուլ կերպով աշխատում էին թշնամու դեմ հաղթանակ նվաճելու համար»[45]։

Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմը ցույց տվեց, որ սովետական հասարակարգը, ինչպես խաղաղ շինարարության տարիներին, այնպես էլ պատերազմի ժամանակ հակառակորդին հակահարված տալու համար ժողովրդի բոլոր ուժերը հանրագումարի բերելու լավագույն ձևն է, հաստատեց, որ սովետական պետական կարգը ֆաշիստական Գերմանիայի և բուրժուական ամեն մի իրավակարգից ամուր է ու կենսունակ։

ВСЕНАРОДНАЯ ПОМОЩЬ ТРУДЯЩИХСЯ СОВЕТСКОЙ АРМЕНИИ ФРОНТУ

КНАРИК ГРИГОРЯН

Резюме

В годы Великой Отечественной войны армянский народ всю работу тыла перестроил на военный лад, подчинив ее полностью интересам фронта, задачам организации разгрома немецко-фашистских захватчиков.

Трудящиеся Советского Союза создали «Фонд обороны страны», имевший серьезное политическое и экономическое значение. Каждый советский патриот чувствовал себя непосредственным участником Великой Отечественной войны.

Труженики сел Армении для танковой колонны «Айастани колтнтесакан» («Колхозник Армении») собрали 49 миллионов 300 тысяч рублей, в фонд обороны сдали 130 тысяч пудов различных продуктов, а комсомольцы и молодежь республики для создания танковой колонны «Айастани комеритакан» («Комсомолец Армении») внесли 3 миллиона 200 тысяч рублей. Трудящиеся Советской Армении, движимые чувством патриотизма, в фонд обороны страны и для восстановления разрушенных городов внесли 215 миллионов 666 тысяч рублей и подписались на государственный военный заем на сумму 665 миллионов 144 тысячи рублей и т. д.

---

48 «Պրավդա», 25. XI. 1945։